ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԶԱՅՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ[1]

ՀԻՆ ՀՈՂԸ

Առաջին անգամ, երբ ոտքդ դնում ես Հայաստանի հողը, զգում ես, որ գտնւում ես հին երկրում, հին հողի վրայ։

Լենինականի մօտով հոսող Արփաչայ գետը կարում է անօթի նման ոլորւած ձորը։ Ներքեւ, գետի ափին՝ տարածւում է մի փոքրիկ դիւղ — «Հողէ» խրճիթներով, որոնք սունկերի նման բուսած են գետնի վրայ։ Հազիւ են նշմարւում։

Գիւղի կեդրոնում եկեղեցին է ցցւած, ժանգոտ դեղնաւուն։

Գիւղին որպէս թիկնապահ՝ կանգնած է մի բլրակ, որի լանջերը նման զսպւած վիզերին, աւելի շուտ՝ նրանց կնճիռներին։ Լանջերն ու ժայռերը ճաքճքւած են, երեւում է՝ հներում այդտեղ շինութիւններ են եղել։ Մի մեծ քարի վրայ նշմարւում է՝ Ուրարտական շրջանի թագաւորներից մէկի արձանագրութիւնը։

Պատմութեան կնիքը դրոշմած է հողի վրայ։

Չէքիդ առչէ պատկերանում են անցեալ դարերը։

Հողը ննջում է. կարծես ուզում է անցեալը յիշել։

Այսպէս է Հայաստանը, համաբերա ամէն տեղ։

Բնութիւնն այստեղ պատմութեան թանձրացեալ պատկերագումն է. ամէն քար ու փոս, ամէն սար ու ձոր — անցեալն է յիշեցնում։ Լեռների կորրւածքները, համախմբումը՝ յիշեցնում են հիերոգլիֆները, ձորի փոսը՝ ներքին աչքը։

Դաշտավայրերը նոյնպէս իւրայատուկ տեսք ունին։

Կայ դեղեցկութիւն, բայց ոչ գինո-ժասլաէնի համար։ Բնութիւնն այստեղ հոգեւոր դաշտավայրի է՝ Ուրարտական շրջանի թագաւորներից մէկի արձանագրութիւնը։

Պատմութեան կնիքը դրոշմած է հողի վրայ։

Չէքիդ առչէ պատկերանում են անցեալ դարերը։

Հողը ննջում է. կարծես ուզում է անցեալը յիշել։

Այսպէս է Հայաստանը, համաբերա ամէն տեղ։

Բնութիւնն այստեղ պատմութեան թանձրացեալ պատկերագումն է. ամէն քար ու փոս, ամէն սար ու ձոր — անցեալն է յիշեցնում։ Լեռների կորրւածքները, համախմբումը՝ յիշեցնում են հիերոգլիֆները, ձորի փոսը՝ ներքին աչքը։

Դաշտավայրերը նոյնպէս իւրայատուկ տեսք ունին։

Կայ դեղեցկութիւն, բայց ոչ գինո-ժասլաէնի համար։ Բնութիւնն այստեղ հոգեւոր դաշտավայրի

(1) գանի մը ամիս առաջ, Խորհրդ. Հայաստանի գրագէտներն ու արուեստագէտներու խումբ մը, նախագահութեամբ ծերունազարդ ու միշտ երիտասարդ Շիրվանզադէին, այցելութեան գացեր են վրաստանի ու Ազրպէճանի մտաւորականութեան, ու փոխադարձաբար վրաստանի ու Ազրպէճանի մտաւորականներն եկեր են այցելել Հայաստանը, եւ այդ առթիւ տեղի են ունեցեր սիրուն հանդէսներ երեք Հանրապետութեանց ու երեք ժողովուրդներուն միջեւ եղբայրական յարաբերութեանց բարեբաստիկ հաստատումը տօնելու համար։ *Նոր Հոդին* իր յունիսի թիւին մէջ հրատարակած է երիտասարդ գրող *Ակագեանի* դաիեկան յօդուածը՝ հայ մտաւորականներու վրաստան ու Ազրպէճան այցելութիւնը նկարագրող, ու վրացի տաղանդաւոր գրագէտ Գրիգոլ Թորաքիձէի յօդուածը վրացի մտաւորականներու Հայաստան այցելութեան մասին. այս վերջին յօդուածը, որ մեր հայրենիքի բնական դիմագծութեան, ժողովրդի բարոյական պատկերին, արուեստին ու բարքերուն մասին ամենէն խորագէտ ու սիրուն գրութիւններէն մին է գոր օտար մը երբեք շարադրած ըլլայ, կ'արտատպենք ամբողջութեամբ։

(Ը. Խ.)

Fonds A.R.A.M

է փոխում, նշմարում է Հայաստանի դաշտավայրերում ծածկված դէմքի դաղտուկ աչքը։

Հայաստանի կուլտուրան բացել —ծաղկում է՝ նման ազատ դաշտավայրերի։

Բնութիւնն ու պատմութիւնը՝ որպէս դոյգ-ընկեր՝ ածում են միասին։

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ

Առաւօտ է։ Խոնաւ գետինը ղղում է արեւի ճառագայթների ջերմ կարօտը։

Հողն աչքերը տրորում է։ լսում ես խոտի ածուծը։

Ղարաքիլիսան նման է մի անօթի — թասի, բաւական լայն, ընդարձակ։ Աչքդ դոցում ես լեռների լանջերին — Լեռները աստիճանաբար խոշորանում-բարձրանում են։ Արդէն երեում է ալպեան գօտին. Բակուրեանն է (1) յիշեցնում։ Լուսիւն է ամենուրեք։ Այս խազազ լուսիւնը թեթեւ խանդարում է փոքրիկ գետակի խոխոչիւնով։

Հանգստեան տուն եւ Լոռու մեղրը։

Ճիշդ որ Հանգստեան տեղ. խաղաղ, դուրեկան։

Գնում ենք ենք դէպ ի Դիլիջան, տարածութիւնն ընդամէնը 40 վերստ է։

Լեռները նման են քարացած շուշաններին։ Կապտաւուն օդն այստեղ այնքան մուդ է, որ յաճախ սեւին է տալիս։

Այստեղ այնտեղ ձեան շերտեր են երեւում։

Լեռները գրկում-սարքաւորում են՝ կարծես երեւակայական եղներ-լծկաններ լինեն։ Եզների կողքերին սազական են ձեան հետքերը։

Ճանապարհին —անհատնում ու անվերջ շարաններ քոչւորներից։ Գնում են...

Նրանք գալիս են Ղըրղըջանից. բերում են իրենց հետ ունեցած-չունեցածը։ Սայլ-արաբաները բեռնաւորւած են աննպատակարով, անային անհրաժեշտ իրերով եւ մանր երախաներով։ Ծածախ արաբա քշողներն աղջիկներ են։ Քոչւորները դաւարը քշում են, բերում Հայաստանի արօտատեղիները՝ ամառն այստեղ արածացնելու համար։

Նայում ես քոչւորներին,—

Այլ եւս չես ուզում հաւատալ պատմութեանը։

Սրանց համար մեր ժամանակաշրջանը նոյնն է, ինչ որ միջին դարերին. ժամանակը սրանց համար գոյութիւն չունի. նայւածքն էլ տարօրինակ է։ Այսպիսի աչքերը յաճախ օձերի վրայ աղդում, տեղն ու տեղը պահում են ժայռոտ վայրերում։ Նրանք արեւին նայում են այնպէս, կարծես իրօք որ վիշապներ լինեն։ Այս աչքերը դեռ եւս չեն կորցրել իրենց «նախադարեան նայւածքի ոյժը»։

Մի բան է զարմանալի սրանց կեանքում.—

Մառած՞ւմ են, խորհո՞ւմ են քոչւորները. ոչինչ չեն ասում, չեն խօսում։

Այս ու այն կողմից ուրիշ աչքեր էլ են առաջդ ցցւում. սեւորա՞կ են նրանք, թէ մուդ կապտաւուն՝ դժուար է ջոկել։ Ղարաքիլիսայից մինչեւ Դիլիջան տանող ճանապարհին փոքրիկ-փոքրիկ գիւղեր են երեւում. ռուսական «սլաբոդկա»ներ են դրանք։ Այստեղ է եղել «պրիգունների» բունը։ Իրօք որ, երբ ուշադրութեամբ նայում ես նրանց քալւածքին՝ նկատում ես, որ «Թուչկոտելով» են նման գալիս։

ԴԻԼԻՋԱՆԸ

Դիլիջանն էլ անօթի նման խոր ընկած է. սակայն պատած է անտառով։ Ջուր ու դուրեկան եղանակ է. Հայաստանի լաւագոյն ամառանոցներից մէկը։ Լաւ շէնք է եւ գեղեցիկ սարքաւորւած՝ տեղական սանատորիան։

Դիլիջանն էլ երկու մասի է բաժնում Ազատաֆինկա գետը. նա փոքր գետ է, բայց եթէ վարարեց... Սակայն ի՞նչ կարիք կայ երկարացնելու խօսքը, երբ այդ վարարման հետեւանքները մինչեւ օրս էլ նշմարւում են նրա ափերին. գետի ներքին հոսանքում, երկու ափին դտնւած շէնքերն աւերւած՝ քարուքանդ են եղած։

ՍԻՄԵՈՆՈՎԿԱ

Ձգիտեմ, ինչո՞ւ է Սիմեոնովկա կոչւում այս գիւղը։

Բարձրանում ենք աւելի բարձր ու բարձր. ճանապարհն այդպէս է։ Բարձունքից նայում ես՝ ետ-առաջդ բացւում են լեռների մէջ խճողւած գիւղերն ու աւանները. յիշում ես ակամայ Գոմբորի շրջանը։

Ընտառը հետզհետէ նօսրանում, վերջանում է։ Հանւում ես Ալպեան գօտային։ Այստեղ-այնտեղ՝

(1) Բորժոմին մօտ՝ վրաստանի լաւագոյն ամառանոցային վայրերից մէկը։

(Մանօթ. թարգմ.)

Fonds A.R.A.M

քարքարուտներում երեւում են ձեան մնացորդներ, նման հսկայ սերամարդի թեւերին։ Բարձրանում ես բարձր ու բարձր։

Դիւղի բարձրութիւնն է 6795 ոտնաչափ։

Բարձրից յանկարծ նայում ես —սքանչելի՛ տեսարան՝ Սեւանայ լիճն է։

Մեր համբերութիւնը վերջ չունի։

Բանասաեղծ Յովհաննէս Թումանեան շատ անգամ է ասել.—

«Չլինի թէ մեռնես, Սեւանի լիճը չտեսած»։

Այդ օրւանից Սեւանի լիճը դարձել էր ինձ համար մտահոգութեան առարկայ, երազանք, տենչանք,—ուզում էի անպայման տեսնել։

Բարձրանում ենք ու շարունակ բարձրանում. հաճբերութիւնն արդէն դրամատիզմի է փոխւել, եւ յանկարծ՝ հանգոյցը կտրւում է։

ՍԵՒԱՆԱՅ ԼԻՃԸ

Պատարեալ «հրաշք», զարմանալի հրաշք։

Դիւղի կատարից նկատում ես — տարածւում է, թեթեւ թեքումով, անսահման տարածութիւն — աչքիդ չեն երեւում հեռու ափերը — նման հալած շափիւղայի, թէ զմրուխտի։ Երկարութիւնն է՝ 76 վերստ, լայնութիւնը՝ 20ից 35 վերստ։

Այս «անհամբերութիւնը» դաստիարակիչ է թւում։

Լեռների մէջ լիճ —6346 ոտնաչափ բարձրութեան վրայ։

Այժմ եմ հասկանում Յովհաննէս Թումանեանի խօսքերի արժէքը եւ իմ ուխտը։

Այս լճից սկսում է բացւել քո մէջ ուսումնասիրութեան կծիկի թելը։

Եգիպտական շափիւղա՞յ, թէ Հնդկաստանի զմրուխտ. չգիտես ո՞րն ընտրել։ Գերագասելի է շափիւղան, հազար տեսակ գոյներով, հազար տեսակ փայլփլումներով։ Հեքեաթային թեւերով շաղախւած շերտեր, կամ նախամարդկանց ջրի մէջ թողած ձուկ սրսող ցանցեր։

Լճի մակերեւոյթը —հայելի, հազարաւոր հայելիների փայլփլումներով։ Բնութեան ակն. Հայաստանի աչքը։

Շուրջ կողմում լեռնաշղթաներ են բացւել — մուգ-կապտաւուն գոյների մէջ կորած. հսկայ լեռներ կպել-բաղխւել են լճին, փարւել նրան ամէն կողմից, անդրպատմական սրսի կենդանիների նման կպել են լճին. ոմանք դինգերով, ոմանք այլ ձեւերով։ Դինգերն ուզում են չորացնել լիճը, միւսներն ուզում են պատառոտել լիճը. սակայն զարմանալի ունակութեամբ գերւած են բոլոր սրսի կենդանիները, լիճը, աչքը —նրանց հայեացքը քարացրել է. քարացել-մնացել են նաեւ դինգերը, ուրուականի նման քարացել-կանգնել են բոլորը։

Այժմ անցնենք լեռներին —հսկայ լեռներին։

Նրանք օղակ են զարմանահրաշ աչքի — Սեւանի։

Սեւանը մատանու մէջ է «բազմած»։

Այս գեղեցիկ ու թանկագին ակնից աչքդ չես հեռացնում, հետեւում ես ալիքների խաղին—մին. չեւ նրա ափերը, որոնք կպած են լեռների լանջերին։

Լեռների գագաթներին տեղ.տեղ ձեան հետքեր են երեւում, որոնց գլխավերեւը շուրջպար են բռնել սպիտակաւուն ամպերը. ամպերի մէջ բացւում է լազուր երկնակամարը։

Դարձեալ մի սքանչելի տեսարան։

Սեւանը մխանում, անյայտանում է լազուր երկնակամարի հետ, լիճը կորցնում է իր նրւթեղէն յատկութիւնը, դառնում է եթերային։ Մատանու մէջ բազմած ակն արդէն անսահմանորէն տարածւում — ընդարձակւում է, նա այլեւս սահմաններ չունի, լեռներ ու ժայռեր կորչում են տեսողութիւնից։

Ցաւն ու վիշտը ճնշում են հոգիդ։

Ուրախութիւնդ, ծիծաղդ կաշկանդած է։

Սիրտդ զարկում է տաթրինակ։

Սեւանը փայլփլում է, նա դարդոտ է՝ մարդկանց նման։

Լազուր երկնակամարից հայեացքդ նորից ձգում ես վար՝ նորից բաղխւում լճին.—

Մի ուրիշ սքանչելի՛ք...

Այժմ թւում է քեզ — թէ՝ երկնակամարից կտրւել մի հատւած եւ զմրուխտ թէ շափիւղայ դարձած՝ սփռւել լեռնաշղթաների մէջ։

Լազուր երկնակամարը լճի է փոխւել։

Սիրտդ երգել է յանկանում։

Այսպէ՞ս է Սեւանը։

Չես կարող չուրախանալ անոր ափին, չերգել։

Չես կարող չվշտանալ այնտեղ, չզարդոտուել նրա ափին, չարտասուել։

Ե՛ւ խնդում ես, և՛ւ լալիս։

Այժմ լաւ եմ հասկանում Ալեքսիք Իսահակ-

Fonds A.R.A.M

եանի, Հայաստանի խորունկ քնարերգուի բանաստեղծութիւնների ժողովածուի վերնագիրը.—

«Երգեր ու վերքեր»։

Ճիշդ որ երկն ու վերքը միասին շաղկապուած։

Այժմ եմ հասկանում Յովհաննէս Թումանեանի առածների իմաստը։

Լաւ է, որ ուխտս չդրժեցի, յանկութիւնս կատարեցի։

Սեւանի լիճում, այդ սքանչելի բիւրեղանման ակնում մեր սիրելի Յովհաննէսի բանաստեղծական բազմազան ժպիտներն են երեւում։

ՄԱՄՈՒԻ — ԺԱՆԳ

Նաւով սլացանք Սեւանի ալիքների մէջ. շըրջեցինք կղզու շուրջը։

Կղզին աւելի շուտ աւերակների տպաւորութիւն է անում։

Վանքերը սեւաւուն քարից են կառուցած։

Ժամանակի ընթացքում քարերի մեծ մասը ժանգոտել, շատերը մաղուակալել են՝ դեղին գոյն են ստացել։ Օ՛ այդ գոյները ժժուար է մոռանալ։

Ցիշեցի Նկարիչ Մարտիրոս Սարեանին։

Դեռ Սեւանին չմօտեցած, լերան լանջը երեւաց գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած. գոյները կարծես կանոնաւոր շերտեր էին կազմել լերան լանջի վրայ։

Մեզնից մէկը կանչեց. «Սարեա՛նը, Սարեա՛նը»։

Եւ ճիշդ որ, այդ գոյատար-շերտաւոր գոյների մէջ Սարեանն է երեւում։

Մուրն ու բազմազան գոյները շերտերի նման կպած են Հայաստանի հողին։

Սարեանն էլ դրանց ծնունդն է։

Թողինք Սեւանը։

Սրտիցս մի բան պոկուեց։

Ձանապարհւեցինք դէպ ի Երեւան։

Դաշտ-դաշտի եռեւից կապւում են իրար, առանց սպասելու, որ մէկը վերջանայ, միւսն սկսի։

Երեւաց սպիտակագլուխ Արարատը, իր որդու հետ։

Շատ լեռներ եմ տեսել, գուցէ եւ գեղեցիկ լեռներ, բայց այն, ինչ որ Արարատն է տպաւորում՝ ուրիշ է։

Անճնից առաջ, աչքի է ընկնում այն, որ մեծնակ է։

Այս միայնութիւնն աւելի ղգալի եւ յուզիչ է դարձնում «փոքրիկ Արարատը»։ Կարծես զգում է որդին, որ հայրը ծերացել է. կարիք ունի օգնութեան։ Կանգնել է կողքին որպէս յենարան, ոչ շատ հեռու։ Սակայն հայրը դեռ կանգուն է, նա աւելի է, դեռ զգալ չի տալիս իր իր ծերութիւնը։

Այո՛, մենակ է, մենակ է նա։

Թւում է քեզ, որ մօտեցել ես արդէն. մի քանի քայլ, եւ սարի տատրատում կը լինես, սակայն քանի մօտենում, այնքան նա յետ-յետ է քաշւում։

Նայում ես. կարծում ես թէ՝ կը ցուցակագրես էքսկուրսանտների ցուցակում եւ երեկոյեան դէմ՝ արդէն կը լինես նրա գագաթին։ Սակայն Արարատը բարձրանում, հա՛ բարձրանում է։

Արարատն այս տեսակէտից գեղարուեստական հանճարաւոր ստեղծագործութիւն է։

«Մօտիկ», «հեռու», «ո՞րտեղ», «ի՞նչ»...

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԸ

Սեւանի վիշան այստեղ ջերմութեան է փոխուած։

Արարատեան դաշտը սահման չունի. վերջ չունի։ Կարծես որտեղից-որտեղ քայլելիս լինէր մի օտար քարաւան, կարծես մի օտար քարաւան գնում է դէպ ի անհունութիւն։ Միայը չկայ—վերջ չկայ։

Շատ գեղեցիկ չէ Արարատեան դաշտը։

Սակայն նրա վրայ այս անսահմանութեան, անորոշութեան գարուն է իշխում։

Դարդ՝ տանջած-խորշոմած սրտի։

Երբ հայեացքս ուղղեցի այս ընդարձակ դաշտավայրի հեռու սահմաններին, նորից ակամայ յիշեցի նոյն Ա. Իսահակեանի յայտնի «Երու Լալա Մահարի» պոեման։

Արեւելքի բանաստեղծը, սիրաը լիքը արեւոտ ժպիտներով եւ ամէն բարիքներով, յանկարծ բեռնաւորւում է, ճանապարհ է ընկնում քարաւանով. ո՞ւր է գնում, դէպ ի ո՞ր կողմ։ Ինքն էլ չգիտէ, միայն թէ՝ ուզում է գնալ։ Ո՞ւմ է պատահելու, ո՞րտեղ է կանգ առնելու, չգիտէ. միայն թէ ուզում է անցնել երկրից-երկիր, սահմանից-սահման, ու թաղուել անհունութեան-անսահմանութեան մէջ։

Fonds A.R.A.M

ԷՋՄԻԱԾԻՆ

Էջմիածնի մասին հատորներ են գրուած։

Հռչակաւոր Գրագարան-Մատենադարանը, ամբողջ Արեւելքի փառքն ու պարծանքը։ Ճասը հազարից աւել ձեռագրերով։ Բազմաթիւ թանկարժէք գրքեր՝ անգնահատելի մանրանկարչական նմուշներով։

Էլ ի՞նչ աւելացնեմ։

Յայտնի է Հռիփսիմէի վանքը — գարմանալի մի նմուշ է հայկական հին քանդակագործութեան, հին ճարտարապետական ճաշի։

Շատ բան է գրուած նաեւ Էջմիածնի տաճարի մասին։

Մի բան սակայն կարեւոր եմ համարում ինքս աւելացնել։

Ճարտարապետական տեսակէտից այս վանքն այնպէս է կառուցուած, որ կարծես թէ՝ ոչ թէ հողի շաղախից եւ գետնի վրայ է կառուցել, այլ ամբողջ վանքն իջեցրած է գետնին՝ որպէս քարէ ցանց։

Այդպիսի տպաւորութիւն է գործում։

Էջմիածնի մօտ անտառ կար. ոչնչացուած-աւերուած է տասնեակ տարի առաջ գաղթականների կողմից. սակայն ոչնչացել են նաեւ իրենք՝ գաղթականները։

30,000 անտէր-անտիրական գաղթականներ, բնաւեր եղած՝ սովի ու բազմազան հիւանդութիւնների ճարակ դարձան նոյն Էջմիածնի պատերի տակ։

Պատմութեան սարսափնե՛ր, պատմութեան զարհուրա՛նք...

ՋՈՒԱՐԹՆՈՑ

Էջմիածնի մօտ կան աւերակներ։

Այստեղ է եղել կառուցած հին մայրաքաղաք Վաղարշապատը։

Աւերակների մէջ յայտնաբերուած է մի տաճար, ինքն էլ աւերակ վիճակում։

Պ. սաեր չկան. շուրջը թափուած են միայն մեծ-մեծ քար. եր։

1. Գե՛ղեցիկ քարերից մէկը, վրան փորագրուած է խաղողի ո՛ղկոյզ։

2. Ուշադրութեան արժանի քար. քանդակուած է խաղողի ամբողջ թուփը, ասես մի ճիւղն իր ողկոյզով եւ տերեւներով։

Խաղողի որթերով ու ողկոյզներով քանդակուած քարեր շատ են թափած այստեղ-այնտեղ։

Երեւում է տաճարի կառուցման ժամանակ կառուցողները որոշ բովանդակութիւն են ուզեցել տալ։

3. Գրանիտի հսկայական քարեր։

Այդպիսի հսկայ քարեր —որքան ուզէք։

4. Տարօրինակ դեղեցկութեամբ մի ուրիշ մեծ քար. որի վրայ փորագրուած է նարինջ, որն անշուշտ որոշ նշանակութիւն ունի։

5. Քար, որի վրայ մարդ է փորագրուած, կողքին մուրճ եւ բահ. ասում են, որ կառուցող վարպետի կերպարանքն է փորագրուած։

6. Մի ուրիշ քար, պարձեալ մարդկային կերպարանքով, այստեղ արդէն փորագրուած է երկու մուրճ, տերեւների հետ միասին։

Ենթադրւում է, որ սա էլ կառուցող վարպետներից է։

7. Քար, մարդկային կերպարանքով—պարձեալ կառուցող վարպետ աշխատաւորներից։

8. Երեք վիմաքար արծուապլուխ նշաններով, քարի վրայ դեռ նկատւում են արձանագրութեան նաեւ նշաններ. արծիւն ունի բաւական լայն թեւեր, մի գլխանի է, ոչինչ չունի բռնած, գրանով տարբերւում է հայկական արծիւներից։ Թեւերը ներկած են կարմիր գոյնով. գոյնը հաղիւ է նշմարւում։

9. Հսկայական պատ քանդակած. բաւական հատ։

10. Երկնային մարմիններ — հսկայ կոթողներով։

11. Զորս ահագին մեծութեան «պիլոններ»։

12. Քարէ սիւնաձեւ արձաններ։

13. Մեծ-մեծ քարեր, որոնք պատկերացնում են —առիւծ եւ մարդ։

14. Կարուած քար —մի մեծ արեւի ժամացոյց։

15. Քար խալդական բեւեռագրերով. սաժին ու կէս երկարութեամբ. գրուած է — Ռուսեա, Վանի թագաւորը (8 դար Ք.Է առաջ) նուաճեց «Կուիդա» երկիրը. կառուցեց քաղաք, այդի, զոհաբերեց աստուածներին։ Քարը մուզ.կապուտ գրանիտ է։

16. Քար՝ աղջկայ պատկերով. ձեռքերը պարզած-տարածած են, երեւի աղօթում է։

17. Մեծ քար —սեւ գոյնի, յունարէն արձանագրութեամբ. «Ներսէս Եպսէսէ Շհեճոնէուսատու» («Ներսէսն է կառուցել, յիշեցէք»)։

Ներսէսը —կաթողիկոս է եղել. նա է կառու-

Fonds A.R.A.M

ցել այս տաճարը։ Գիտնականներից շատերը կարծում են, որ նախագիծն էլ նա է կազմել եւ ըստ այդ նախագծի կառուցել է վանքը։

Տաճարի շինութիւնը սկսած է 645 թւին, վերջացրել-աւարտել են 658 թւին։

Քարեր, քարեր, ու քարեր, որքան ուզէք։

Ճարտարապետ Թորամանեանը վերականգնել է այդ տաճարի մոտելը. նա տեսել է նոյն այդ ձեւի շինուած մի տաճար Հին Անի քաղաքի աւերակներում. նաեւ Բանայում (Մահմետական Վրաստան)։ Այս տաճարի ոճով վերականգնել է նաեւ Զուարթնոցի մոդելը։ Նկարը եւ մոդելը պահւում են. Թորամանեանի աշխատանք։

Բանայի տաճարը (10րդ դար) նկարուած է Կալգին ճարտարապետի կողմից (Վրաստանի թանգարանում)։

Թորամանեանի ջանքերով վերականգնուած Զուարթնոցը նման է Բանայի տաճարին. մի տարբերութեամբ միայն, Զուարթնոցը կլոր է—շրջաձեւ. մինչդեռ Բանայի տաճարը թէեւ նոյնպէս կլոր է, բայց երբեմն-երբեմն տեղ-տեղ թեթեւ անկիւնաւոր է դառնում (սիմետրիան անշուշտ պահպանուած է)։ Բանայի տաճարը աւելի գեղեցիկ է երեւում արտաքուստ։

Զուարթնոցի առաջնութիւնը միայն նրա հնութեան մէջ է. աւելի հին է քան թէ Բանայի տաճարը։

Տաճարը կազմուած է եղել երեք մասից։

Առաջին մասը —բաժանմունքը (լայն) վերջանում է գալերիայով, շինուած է թաղերով, թաղերը յենուած են սիւների վրայ։ Այս գալերիային միանում է երկրորդ բաժանմունքը (աւելի պակաս լայնութեամբ)։ Երրորդ բաժինը (աւելի նեղ) կցուած է ապրանքներին։

Տաճարը դրսից պատած է եղել պարսպով, հետքերը երեւում են։

Թորամանեանը ճարտարապետութեան մէջ հրապարակ է գալիս որպէս Փիւլիէ. ինչպէս այս գիտնականը հատարակ ոսկորի կտորով վերականգնել է հին կենդանական աշխարհը, այնպէս էլ Թորամանեանը հատարակ քարի կտորներից վերականգնել է տաճարի «կմախքը»։

Սակայն այս անալոգիայով, կարող ենք աւելի հեռուները գնալ։

Դժուար է վերարտադրել այն տպաւորութիւնները, ինչ որ թողնում են մարդու վրայ այս աւերակները։

Տաճարի կմախքը լուծուել-քանդուել է, ամբողջը բաժին բաժին է եղել. սակայն միեւնոյն ժամանակ, կարծես՝ իւրաքանչիւրն այդ բաժիններից «ամբողջացել», մի ամբողջութիւն է կազմում։

Այստեղ իւրաքանչիւր քարն ինքնին մի տաճար է ներկայացնում, իր առանձին կեանքն է ապրում։ Այժմ եմ հասկանում «աւերակների էսթետիկան»։ Իրար վրայ կերտուած այս քարերը զարմանալի նախանշան ապացոյցներ են անցեալ արժէքաւոր արուեստի։ Մի գիտէ, գուցէ անցեալում, դեռ եւս չաւերուած այդ վանքը նոյն տպաւորութիւնը չթողնէր, ինչ այսօր։ Այստեղ, ամէն այցելու տաճարի անցեալը մօտաւորապէս է մէյն պատկերացնում։

Հայաստանի ճարտարապետութեան հանճարն ամբողջովին Զուարթնոցումն է գործադրուած(1)։ Գեղեցկութիւնն ու ազնիւութիւնը ամէն քայլափոխին է երեւում—ամէն քարից ու ամէն սիւնից։

Զուարթնոցին կից պահւում է մի բնակարան, երեւի թագաւորական պալատն է. աւերակ է։ Կարելի է պարզել հետեւեալ բաժանմունքները—փոքրիկ աղօթատուն, ընդունարան-դահլիճ, ննջարան, բաղնիք եւ այլ բաժանմունքներ։

Երեւում են նաեւ այլ շէնքեր — վերանորոգուած հին շէնքերի վրայ։ Մի աւերակ սարի մէջ գտանք տեղաւորուած շատ հնուց մնացած շէնքերի քարերի նմուշներ։

Ինչպէս երեւում է՝ հեթանոսական դարերում այս նոյն տեղում գոյութիւն ունէին շէնքեր, բնակութիւններ, աղօթատներ, եւն.։

Զուարթնոցի բակում ջրհոր է փորած 70 արշին խորութեան։ Ջրհորի բոլոր պատերն ամբողջ խորութեամբ շինաքարերից են կառուցած։ Ջրհորի տրամագիծն այնքան նեղ է, որ հազիւ մի արշին լինի։

Լրագիրը վառեցինք եւ վառած բաց թողնինք ջրհորի մէջ. վառած թուղթը բաւական երկար լողում էր ջրհորի խորքում։

---

(1) Եթէ Պ. Թորամանեանին ու Ղազարոսին այցելել կարողացած լինար՝ երբ բոլորովին քարուքանդ չէին եղած դեռ, Թերեւս այսպէս պիտի չգրէր։ (Ծ. Խ.)

Fonds A.R.A.M

Ջրհորի փոսից, թղթի խշխշոցից լսում էինք անցեալ ժամանակաշրջանը։

ԿԱՏՈՒՆ ԵՒ ՁՈՒԿԱՀԵՒ

Կարելի է գրել «Հայաստանի բախտը»։

Ողբերգութիւնների շարան է նրա ճակատագիրը։

Այստեղ թոյլ ենք տալիս մեզ մի փոքր պատկեր։

Երեւանին շատ ճօտ, տասը տարի առաջ, բնակութիւն հաստատեց մի գաղթական։ Ընտանիքը կորցրել էր ինչ որ անյայտ տեղում, ինքը միայնակ։ Նրա ճօտ կային մեզ երկու փոքրիկ ճանուկներ։ Սակայն հէնց որ «տեղափոխուեց», նա անմիջապէս իր հաճար վերցրեց մի փոքրիկ հողաբաժին, որի վրայ սեւ քարերից կառուցեց փոքրիկ սենեակ. օճախը յարմարեցրեց սենեակի մի կողմում, ծուխը բարձրացաւ։

Իսկ եղնե՞րը, ձի՞ն, կո՞վը —ո՞րտեղից գոնէր. չէ՞ որ ծուխ բարձրացող օճախին է՛լ ուրիշ շատ բաներ են պէտք։

Գաղթականը գնում է շուկայ, գրպանում մի քանի կոպեկ. ուզում է կատու գնել. որոնում է։ Պատահողները ծիծաղում են վրան։ Գաղթականի դէմքին երբեք ժպիտ չի երեւացել, այժմ էլ չի ժպտում։ Նա յանկանում է գնել կատու։ Ինչո՞ւ է ուզում անպատճառ կատու։ Կատուն միշտ օճախին ճօտ կը լինի. նա օճախից չի հեռանայ, մատծում է նա։

Պատմական իրողութիւն է։

Ողբերգութիւնն այստեղ կատարելութեան աստիճանին է հասած։

Այստեղ կատուն ներկայանում է շեքսպիրեան տիպ։

Երբ այսօր տեսնում եմ Հայաստանի այն ազանձելի շինարարութիւնը, ակամայ այս կատուն եմ յիշում։ Ի՞նչքան երկար ժամանակ է անցրել Հայաստանը — կատուից մինչեւ այսօր։

Շինարարութիւնն այսօր Հայաստանում առաջ է գնում երկաթէ բազուկներով։

Խորհրդային իշխանութիւնը փիլիքապէս փըրկել է ժողովրդին. նոյն այդ իշխանութիւնը հնարաւորութիւն է տալիս այդ ժողովրդին՝ ոտքի կանգնել եւ մէջքը պնդացնել։

Այս փաստն աղաղակող է առանց որ եւ է տատանման։

Տներով, մեծ-մեծ շէնքերով կառուցում, աւերակ տների վերանորոգում, քանդուածների վերաշինում, ջրանցքների կառուցում, անտառների ծաւալում, հիդրօկայանների կառուցում, արդիւնաբերական շրջանների կազմակերպում, եւ հազար ու մի այլ կարգի վերանորոգութիւններ, —ահա թէ ինչ ես տեսնում Հայաստանում իւրաքանչիւր քայլափոխին։

Լենինականը քարուքանդ եղաւ երկրաշարժի պատճառով։

Սակայն աշխատաւորի ձեռքը նորից վերա կանգնել է այդ քաղաքը։

Հէնց վերցնենք մեզ միայն Շիրակի ջրանցքը. ինչ ասես որ չարժի։ Սուր-ժանիքաւոր ժայռերի մէջ կառուցուած է ջրանցքը։ Երեւում է նեարդերի խիտ լարում եւ ուժեղ կամքի գործադրութիւն։

Մտնում — հրապարակ է գալիս Նոր Հայաստանը։

Հին մարդիկ բոլորը երիտասարդ են երեւում։

Եւ այդպէս էլի ամենուրեք։

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ

Աշխարհիս բոլոր անկիւններից այսօր դէպի Հայաստան են դիմում Հայ բազմազան կուլտուրական ուժերը։ Երեւանը դարձել է բոլորի համար մի տեսակ կուլտուրական օճախ։ Նկարիչ, քանդակագործ, երաժիշտ, արտիստ, գրող, գիտնական, ուսուցիչ եւլն., բոլորն էլ կեդրոնացել են Երեւանում։ Գալիս են — Ռուսաստանից, Ֆրանսիայից, Թուրքիայից, Ամերիկայից, Բալկաններից։

Բանաստեղծ Աւետիք Իսահակեան, օժտուած խորունկ ինտուիցիայով, բարձր կուլտուրայի մարդ։ Նրա «Աբու Լալա Մահարի» նշանաւոր պոեման ութ լեզուներով է թարգմանուած։ Պրոֆիլը հին ցեղի, մոգէսագոյն աչքերով։ Հեռուներն է նայում։

Նկարիչ Մարտիրոս Սարեան, յայտնի նաեւ Եւրոպայում. խազաղ ու հանդիստ բնաւորութեամբ։ Դէմքին խորը վիշտ։ Մարդ, որին առաջին հանդիպման վայրկեանից իսկ սիրահարւում ես։

Ճարտարապետ Թամանեան, ակադեմիկոս, բարձրահասակ, նիհար, կարճես ծերացած։ Աչքերն ընկուզանման դուրս ընկած —մանուանդ աջ աչքը։ Քարի երապատես (վիպիներ), անհանգիստ սրտով։

Fonds A.R.A.M

Երաժիշտ Սպենդիարեանը, որը մեռաւ անցեալ տարի (1928 թ.)։

Մարիետա Շահինեան, հանրածանօթ գրականագիտուհի։

Նկարիչ Թէրլէմէզեան, հիւանդ ձեռքով։

Պրոլեթ-գրող Վշտունի, Վերլէնի ոտանաւորներն այնպէս է արտասանում ֆրանսերէն լեզուով, ինչպէս իր «Ջան, Ազըրբէյջան» ստեղծագործութիւնը, աշխուժ, գործունեայ, յոգնածութիւն չիմացող։

Եւ ուրիշ շատերը։

Սրանք եկել են այլ եւ այլ կողմերից։

Բոցավառւում է կուլտուրական օճախը։

Այսօր այս օճախի ղեկավարն է Լուսժողկոմ ընկեր Մռաւեանը, պրոֆիլ —հին խաթերին (հիթթիթ) է նման. խօսում է կուլտուրական նուաճումների մասին եւ ուրախանում է, շարունակ ժպտադէմ։ Երբ վերջացնում է որ եւ է նախադասութիւն, բաւական պաուզայից յետոյ, նորից կրկնում է նախադասութեան վերջին բառերը։ Կարծես ուզում է դիմացի խօսողի վրայ տպաւորել իր ասածները։

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՏԵՍԱՐԱՆ

Մասսան նոյնպէս զգում է, որ օճախը բոցավառւում է։

Հիւրանոցի առաջն էինք կանգնած. սէտք է էջմիածին ճանապարհ։ էինք։

Ճանկարծ հիւրանոցի առաջ իջաւ Նոր Բայազէտից եկող էքսկուրսանտների մի ստուար խումբ, բոլորն էլ երիտասարդներ։

«Շիրվանզադէ՛ն, Շիրվանզադէ՛ն»... կանչում են նրանք։

Շիրվանզադէն սենեակում իր երեսն է լուանում—լուսցյալանի առաջ։

Բայց նոյն ժամին, հիւրանոցի առաջ կանգնած են մի քանի ավտոմոբիլներ. մէկի մէջ նստած է Աւետիք Իսահակեանը։ Ետեան շրջապատեցին ավտոմոբիլը. խօսում են, հարց ու փորձ անում սիրալիր ժպիտներով. բոլորն էլ ուրախ են, որ տեսան իրենց սիրելի բանաստեղծին։

Բանաստեղծը յուզւած է։

Պատասխանի փոխարէն հատ-հատ բառեր է արտասանում։

Կարծես ուզում է արցունք թափել։

Բայց բանաստեղծը պահում է իրան։

ՆՈՐ ԵՐԵՒԱՆԸ

Գնում ենք Թամանեանի ճօտ, մեզ առաջնորդում է Սարեանը։

Թամանեանը դիմաւորում է մեզ ժպտադէմ։

Բայ է անում մեր առաջ Նոր Երեւանի նախագիծը, սա նրա մտքի յղացումն է։

Ամէն ինչ նախատեսւած է այս նախագծի մէջ։

Երեւանի շրջակայքը չոր է, մերկ։ Ջրանցքներ պիտի անցնեն այս տեղերով եւ անտառներ պիտի շէնացնել։ Այժմ սոսկալի քամիներ են գալիս այդ տեղերից իրենց հետ բերելով անտանելի փոշի։ Երբ այդ քարքարոտ բլրակները ջրանցքներ շինւին եւ անտառներ կառուցւին, անշուշտ Երեւանը կ'ազատւի իր սովորական անտանելի փոշուց։

Երեւանը շոգ օրերին անտանելի է, խոնաւութիւնը պակասում է։ Դրա համար հարկաւոր է նրա միջով անցնող Զանգու գետի ջուրը ամբարել եւ շինել արհեստական լիճ։ Այս արհեստական լիճը անհրաժեշտ խոնաւութիւն կուտայ քաղաքին. միեւնոյն ժամանակ՝ ջուրը կարելի կը լինի գործադրել հիդրոկայանի համար։

Համաձայն այդ նախագծի —Երեւանը բաժանւած է թաղերի.— Համալսարանի թաղ, արուեստի թաղ, վարչական թաղ, արդիւնաբերական թաղ։ Վերջինս գտնւում է քաղաքի այն ծայրամասում, որտեղից բացւում է Արարատեան դաշտը։

Այս թաղերում արդէն սկսւած են աշխատանքներ։ Արդիւնաբերական թաղում արդէն կան բաւական թւով գործարաններ։

Համալսարանի թաղում —կլինիքական բաժանմունքներ եւ հանրակայաններ։

Վարչական թաղը պիտի լինի քաղաքի կեդրոնում. այս կեդրոնաթաղի կեդրոնում —կուլտուրայի տունն։

Կուլտուրայի տան առաջ նախատեսւած է այգի, իսկ այգում՝ Լենինի արձան։ Այսպէս է ծրագրւած։

Ամէն ինչ նախատեսւած է այդ նախագծի մէջ։

Գեղեցիկ նախագիծ, բաւարարող ամէն տեսակէտներից։

Շէնքերի մի մասը արդէն կառուցւած է եւ կառուցւում է։

Ամէն շէնք կարծես իր յատուկ ոճն ունի։

Թամանեանը նկատի է ունեցել Հայաստանի

Fonds A.R.A.M

հին ճարտարապետական ոճը։ Բայց չի վերցնել այդ ոճը կառուցման համար— որովհետեւ այդ կը լիներ հնաբանութիւն, հնապաշտութիւն։ Վերջ ի վերջոյ—դա կը լիներ ոճի անհասկացողութիւն։

Ոճը —պլաստիքական-թանձրացեալ պատկեր է տւեալ դարաշրջանի, դարաշրջանն անցել է— ոճն էլ պիտի անցած համարել։

Սակայն ինչպէս մի դարաշրջան որոշ սնունդ է տալիս միւս դարաշրջանին, այնպէս էլ ոճը որոշ պաշար է ճատակարարում նոր ոճին։ Այստեղ կան որոշ նրբութիւններ, որոնց օգտագործումը կարող է անել մեծ-վարպետ արուեստագէտը։

Թամանեանը աչքի ընկնող եւ ամուր արուեստագէտ է եւ յաջողութեամբ իր այդ կարող շնորհքը գործադրել է իրականութեան մէջ։

Նրա ջանքերով կառուցած շէնքերի մէջ հին ճարտարապետական ոճը որոշ չափով է միայն «օգտագործւած»։ Բոլոր շէնքերն օրգանական քնոյթ ունին. նրանք անուած ու ծնուած են ժամանակի պահանջներից եւ համապատասխանում են օրւայ կարիքներին։

Թամանեանի ծրագիրն աստիճանաբար իրագործում է։

Երբ ամբողջովին աւարտած կը լինի այս ծրագիրը, այն ժամանակ «Նոր Երեւանը» կը բացի քո առաջ, որպէս արուեստագէտի կառուցւածք. արտադրութիւն։

Քաղաք —շէնեւր (հրաշակերտ). ահա ի՞նչ ես զգում, երբ նայում ես առաջդ փռւած Նոր Երեւանի նախագծին։

Թոշոր սիմֆոնիական հայեացք ունի արուեստագէտ Թամանեանը, դրա հետ միասին նաեւ անչափ սէր՝ դէպի իր ստանձնած գործը։

Դուք պիտի ականատես լինէիք եւ տեսնէիք, թէ ի՜նչպիսի ոգեւորութեամբ էր բացատրում ամէն ինչ եւ ի՜նչպիսի հրճուանքով էր ցոյց տալիս ամէն մի քար, ամէն շէնք։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Այս տունը թատրոն պիտի լինի։

Երկու կողմից դահլիճ —ամառայինն եւ ձմեռայինն։

Թեմ չորս անկիւնանի, պայտի նման կարւում է դահլիճի մէջ։

Դժուար է գրի առնել եւ նկարագրել այս նախագծի էութիւնն ու մանրամասնութիւնը. պէտք է դրա համար ճարտարապետ լինես։

Գեղեցկութիւնն ու նպատակադրութիւները մըրցման մէջ են իրար հետ։

Այս նախագիծը Թամանեանի աշխատանքների շեֆերն (chef-d'œuvre) է։

Այս շէնքը լաւագոյններից կը լինի ամբողջ Խորհրդային Միութեան մէջ։

Հասկնալի է արդէն, թէ ինչո՞ւ է ջղայնանում արուեստագէտը, երբ խօսում է այս նախագծի մասին։ Նա վախենում է, թէ մի՛ գուցէ որ եւ է բան խանգարիչ հանդիսանայ իր այս նախագիծն իրականացնելու ճամբին։

Եթէ յուսադրեցիր, ուրախանում է։

Անշուշտ յոյս կայ որ թղթի վրայ չի մնայ նախագիծը, գեղարուեստական արժէքաւոր ուսումնասիրութիւնը։

ՄԵՋԻ՞Դ ԹԷ ՄՋԿԻԹ

Նոր Երեւանում մի քանի շէնքեր պիտի են անձեռնմխելի։

Այդպիսի շէնքերից է՝ մէջիդը, կառուցած սրանից 280 տարի առաջ։

Դրսից այնքան էլ գեղեցիկ շէնք չի երեւում (սա ընդհանուր դիծ է արեւելեան մահմեդական-ութեան)։

Ներսից մինչդեռ—սքանչելի է։

Սակայն այս «ներսինը» շէնքին շատ քիչ է վերաբերում։

Մէջիդի «ներսում»—հասարակ աղօթատուն է. այստեղ շատ ժողովուրդ չի էլ կարող տեղաւորւել, թէեւ շէնքը բաւական մեծ ու ընդարձակ է։ Դրսի պատերն ամէնի գեղեցիկ են երեւում։ Գեղարուեստական մեծ հմտութեամբ նրանց վրայ արձանագրւած են «Ղուրանից» մի քանի հատւածներ զանազան տեսակի տառերով։ Իսկապէս գեղարուեստական արժէք են ներկայացնում այդ արձանագրութիւնները։

Ուշադրաւ է այստեղ նաեւ մի ուրիշ հանգամանք։

Երբ մտնում ես մէջիդի ներսը՝ դռնից դու չես մտնում ուղղակի մէջիդ, այլ գտնւում ես մեծ քառակուսու մէջ, որը երեք կողմից շրջապատւած է

Fonds A.R.A.M

պարսպի նման փոքրիկ շէնքերով— (երրորդ կողմը բռնում է ինքը մեջիդը)։ Այս քառակուսու մէջ գտնում է մեջիդի բակը, ծառեր, ցանկապատեր։ Կեդրոնում աւազան։ Վերից քառակուսու վրայ երկնակամարն է իջնում. սա ճարտարապետական խորհրդանշանն է այս շինութեան։ Կարծես քառակուսու գլխին երեւացող երկնակամարն էլ հաշւի առնւած լինի շէնքի կառուցման ճարտարապետական նախագծի մէջ։ Այդ պատճառով է դուրս, որ իսկական մեջիդի տարածութիւնն այնքան էլ մեծ չէ, նա տարածւում է աւելի շատ բակում։ Շինութիւնները ցածր են, որպէս զի առանց այն էլ մեջիդի բարձր շէնքն աւելի բարձր երեւայ։

ԵՐԳ

Լսել եմ Թառի նուագը Պարսկաստանում, Երեւելքի այդ հանճարեւոր գործիքը։ Լսել եմ նաեւ Ադրբեջանում։ Դեղեցկութեամբ եւ նրբութեամբ են նուագում։ Սիրտդ ալեկոծւում է, զգածւում ես խորապէս։

Սակայն, երբ Թառի վրայ հայ մարդն է նւագում, նա իր որոշ կնիքն է դնում այդ նուագի վրայ. սիրտդ ճմլւում է։

Այսպէս են նաեւ նրանց երգերը. — դարդոտ, վշտոտ։

Սպենդիարեանի սիմֆոնիական էսքիզներում անգամ յաճախ նշմարում ես ախորժիւն։

Մի ուրիշ բնորոշ կողմ։

Հայ երգեցողութեան մէջ սօլօն ուժեղ է, խումբը-խմբականը. թոյլ։

Այս բանը նկատել էր նաեւ ինքը՝ Սպենդիարեանը։

ՊԱՐ

Այո՛, զարմանալի։

Բոլորովին այլ բան է հայկական պարը։

Ո՛չ վիշտ, ո՛չ ցաւ, ո՛չ դարդ, այլ ընդհակառակը՝ առողջ ծիծաղ, ճարպիկութիւն—հունար, ըմբոստութիւն։

Այս մեկ։ Երկրորդ.

Հայկական պարերի մէջ սօլօն թոյլ է, մինչդեռ խումբը —խմբականը ուժեղ ու ամուր։

Զարմանալի է նրանց կլոր-պարը, եայլին — վայրի ռիթմերով շաղախւած։

Այս ռիթմերը յաճախ աշխատանքի բնոյթը նկատի առնելով են ստեղծագործւած։

Մասսայի ռիթմերը պարզորոշ կերպով նշմարւում են։

Երբ դիտում եւ կեդրոնանում ես այդ ռիթմերի վրայ, զգում ես, որ դարձել ես քանդակագործ։

Այս ռիթմերը ոչնչով եաւ չեն յիշում վրաց-Սուանական ռիթմերից, միայն մի տարբերութեամբ, որ հայկականի մէջ աւելի վայրի ըմբոստացում է նկատւում, մինչդեռ Սուանականի մէջ կենսաբանական հանգոյց է նշմարւում։

Հետաքրքրական մի խնդիր, թէ ինչո՞ւ հայկական երգն ու պարը բոլորովին տարբեր բնոյթ ունին։

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՐՋՆԿԵԱՆ

Մեր հիւրասիրողները Հայաստանում կուրախանան, եթէ նրանց դէմքերը Արամայիս Երջնկեանի մէջ տեսնեմ։ (Այսպէս էին մտածում նաեւ բոլոր պատգամաւորները)։

Ով այցելում է Հայաստան, նա կը յիշի Երջնկեանին։

Բոլորի աչքին զարնում է նրա պրոֆիլը։

Երբ Արամայիսը խօսում է, ծիծաղում-ժպտում է—ուրախանում։ Ծիծաղ է նրա դէմքին, երբ առաջին անգամ հանդիպում ես եւ երբ դիմաւորում է քեզ։

Ուրախութիւնն աչքերին է անցնում, կարծես, այո՛, անցնում է։ Աչքերը ճանրանում են, կարծես ժպտում են։

Սակայն, երբ ուշադրութիւնդ կեդրոնացնում ես, նկատում ես՝

Աչքերն արցունքոտւում են, կարծես արցունքոտւում են։

Այս մարդու մէջ նկատելի է կարծես խոշոր ուրախութիւն եւ նոյն չափ էլ խորը վիշտ։ Առաջնով վարակում է։ Երկրորդով ժամանակ չի տալիս։

Ոգեւորւում է յաճախ մանկան նման։

Ուժեղ կերպով կեդրոնացնում ես ուշադրութիւնդ նրա ճակատին —ամուր է նա ու հաստատուն։

Եւ այս «մանկան» մէջ դու տեսնում ես հին սաորական պրոֆիլ։

Fonds A.R.A.M

ՅԵՏ - ԳՐՈՒԹԵԱՆ, ՈՐ ԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՆՁԻՆ ՆԻՒԹ ՄԸՆԱԿԵԼ

Ի՞նչ էին անուն մեր հները, մեր նախորդները։ Ինչո՞ւ չտեսան, չայցելէցին Հայաստան։

Ո՞րտեղ էին գրողները, հեղինակները, պոէտները։

Եթէ այցելէին, տեսնէին իրար, անշուշտ «ազգային - նացիոնալիստական հոգեբանութիւն»ը պակաս տեղ կը գտնէր նրանց մտածմունքի մէջ։

Մենք, գրողներիս կողմից ուղարկած պատգամաւորներս, բոլորս էլ սրտանց ուրախացանք (1)։

ԳՐԻԳՈԼ ՌՈՒԲԱՔԻՇԷ

Վրացերէնից թարգմանեց
ԱՐՇ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

(1) Այս յօդուածին բնագիրը միաժամանակ լոյս տեսած է վրացական «Մնաթոփի» հանդէսին մէջ։ (Ը. Խ.)

ԴԱՐՁՈՂ ԵՐԱԶ

Դարձող երազն էր անցեալին արեւներեն,
Ծժգոյն ճաճանչ որով ճամբան եղաւ ներսակ,
Ու խալեցի ձեռքս ձեռքիդ մէջ տրմուցակ,
Մինչ խաղցր ձայնդ կ'օրօրէր հոգիս ցորեն։

Կը փախչէր լոյսը վարդագոյն տերեւներեն,
Պուրակին մէջ ուր իրիկունն էր մանիշակ,
Ու մենք խոնա՛րհ հինք սիրոյ ճայուածքին տակ,
Ու մեծ աչերդ հին երկինք մը լուսեղեն...

Ո՞վ պահեց մեր համբոյրը վառ, բո՛ց երդումի,
Ծա՞ռ մը խորունկ արտի մը պես, ջո՞ւրը գալտնի
Ուր ցոլացաւ լոյսի դողով տեսիլը մեր՝

Տակաւ հիւսուող ըստուերին դէմ իրիկնային,
Եղեգներուն մէջ թեւամիսի ծո՞ւնչը հովին,
Կամ ժժգոյն ա՞սղ մը ճոյն պահուն որ կը մեռնէր ...

Fonds A.R.A.M